ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ Ո ՀՄԱԾՁԲ-ԱՎՏՈԼՎԱՑՈՒՄ/2022/Հ-42

ք. Երևան «29» 04 2022 թ.

ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Վ. Մովսիսյանի, որը գործում է ոստիկանության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից , և «Հենդ Արտ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Ռշտունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ավտոմեքենաների լվացման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **11,610,000 (տասնմեկ միլիոն վեց հարյուր տաս հազար)** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման

գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ոստիկանություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական
վարչություն
Հ/Հ 900011021947
ՀՎՀՀ 01533334
հեռ. 59-69-30
Էլ. Փոստ. policetv.gnumner@mail.ru

_____ Վ. Մովսիսյան
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ
«Հենդ Արտ» ՍՊԸ
Մալաթիա-Սեբաստիա
Հովնաթանի փ.20Ա
ՀՎՀՀ 01306884
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 2050022593931001
Հեռ:099333328
Էլ.հասցե՝ hendartllc@mail.ru

_____ Ա.Ոշտունյան
/տնօրեն/
(ստորագրություն)
Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

_____

Հավելված N 1
« 29 » 04 2022թ. կնքված
ՀՀ Ո ՀՄԱԾՁԲ-ԱՎՏՈԼՎԱՅՈՒՄ/2022/Հ-42
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	50111180/26	*Ավտոմեքենաների լվացման ծառայություն* ***/Ստեփանավան/*** Գնման առարկա է հանդիսանում Ճանապարհային ոստիկանության 2-րդ սպայական գումարտակին ամրակցված ճանապարհապարեկային ավտոմոբիլների /համապատասխան գունագրաֆիկ տառաթվային նշագրումով և կահավորված լուսաձայնային սարքերով/ լվացում, սեղան և ունիվերսալ թափքով ավտոմոբիլների համար, մեկ ավտոմոբիլի լվացումը 3 օրը մեկ անգամ հաշվարկով: 1. Ավտոմոբիլների լվացումը՝ հպումով, ոչ ավտոմատ եղանակով, սրահի մաքրում փոշեկուլի միջոցով, շարժիչի արտաքին մակերևույթի կեղտաբծերի մաքրում, թափքի չորացում և անհրաժեշտության դեպքում առաջացած խազերի վերացում հատուկ նյութերով: Լվացման ժամանակ օգտագործել միայն ավտոմոբիլների լվացման համար նախատեսված ոչ քայքայիչ լվացող նյութեր: 2. Աշխատանքի տևողությունը մեկ ավտոմոբիլի համար մինչև 20 րոպե: 3. Ավտոմոբիլների լվացումը կատարել Ճանապարհային ոստիկանության 2-րդ սպայական գումարտակի 1 – 6 վաշտերի կողմից տրված կտրոններով և արտահերթ: 4. Ավտոմոբիլների լվացումը սպասարկել ժ. 08.00 մինչև. 20.00 5. Ավտոլվացման համար նախատեսված տարածքը առնվազն 25 քառ.մ.:	դրամ	2 376 000	1	***Ստեփանավան***	Պայմանագիրը ուժի մտնելուց 10 օր հետո Բայց ոչ ուշ, քան 20.12.2022

2	50111180/27	*Ավտոմեքենաների լվացման ծառայություն* **/Տաշիր/** Ճանապարհային ոստիկանության 2-րդ սպայական գումարտակին ամրակցված ճանապարհապարեկային ավտոմոբիլների /համապատասխան գունագրաֆիկ տառաթվային նշագրումով և կահավորված լուսածայնային սարքերով/ լվացում, սեղան և ունիվերսալ թափքով ավտոմոբիլների համար, մեկ ավտոմոբիլի լվացումը 3 օրը մեկ անգամ հաշվարկով: 1. Ավտոմոբիլների լվացումը՝ հպումով, ոչ ավտոմատ եղանակով, սրահի մաքրում փոշեկուլի միջոցով, շարժիչի արտաքին մակերևույթի կեղտաբծերի մաքրում, թափքի չորացում և անհրաժեշտության դեպքում առաջացած խազերի վերացում հատուկ նյութերով: Լվացման ժամանակ օգտագործել միայն ավտոմոբիլների լվացման համար նախատեսված ոչ քայքայիչ լվացող նյութեր: 2. Աշխատանքի տևողությունը մեկ ավտոմոբիլի համար մինչև 20 րոպե: 3. Ավտոմոբիլների լվացումը կատարել Ճանապարհային ոստիկանության 2-րդ սպայական գումարտակի 1 – 6 վաշտերի կողմից տրված կտրոններով և արտահերթ: 4. Ավտոմոբիլների լվացումը սպասարկել ժ. 08.00 մինչև. 20.00 5. Ավտոլվացման համար նախատեսված տարածքը առնվազն 25 քառ.մ.:	դրամ	1 515 000	1	***Տաշիր***	Պայմանագիրը ուժի մտնելուց 10 օր հետո Բայց ոչ ուշ, քան 20.12.2022
3	50111180/28	*Ավտոմեքենաների լվացման ծառայություն* **/Սպիտակ/** Գնման առարկա է հանդիսանում Ճանապարհային ոստիկանության 2-րդ սպայական գումարտակին ամրակցված ճանապարհապարեկային ավտոմոբիլների /համապատասխան գունագրաֆիկ տառաթվային նշագրումով և կահավորված լուսածայնային սարքերով/ լվացում, սեղան և ունիվերսալ թափքով ավտոմոբիլների համար, մեկ ավտոմոբիլի լվացումը 3 օրը մեկ անգամ հաշվարկով: 1. Ավտոմոբիլների լվացումը՝ հպումով, ոչ ավտոմատ եղանակով, սրահի մաքրում փոշեկուլի միջոցով, շարժիչի արտաքին մակերևույթի կեղտաբծերի մաքրում, թափքի չորացում և անհրաժեշտության դեպքում առաջացած խազերի վերացում հատուկ նյութերով: Լվացման ժամանակ օգտագործել միայն ավտոմոբիլների լվացման համար նախատեսված ոչ քայքայիչ լվացող նյութեր: 2. Աշխատանքի տևողությունը մեկ ավտոմոբիլի համար մինչև 20 րոպե: 3. Ավտոմոբիլների լվացումը կատարել Ճանապարհային ոստիկանության 2-րդ սպայական գումարտակի 1 – 6 վաշտերի կողմից տրված կտրոններով և արտահերթ: 4. Ավտոմոբիլների լվացումը սպասարկել ժ. 08.00 մինչև. 20.00 5. Ավտոլվացման համար նախատեսված տարածքը առնվազն 25 քառ.մ.:	դրամ	1 515 000	1	***Սպիտակ***	Պայմանագիրը ուժի մտնելուց 10 օր հետո Բայց ոչ ուշ, քան 20.12.2022

4	50111180/29	*Ավտոմեքենաների լվացման ծառայություն* **/Աշոցք Ամասիա/** Ճանապարհային ոստիկանության 2-րդ սպայական գումարտակին ամրակցված ճանապարհապարեկային ավտոմոբիլների /համապատասխան գունագրաֆիկ տառաթվային նշագրումով և կահավորված լուսաձայնային սարքերով/ լվացում, սեդան և ունիվերսալ թափքով ավտոմոբիլների համար, մեկ ավտոմոբիլի լվացումը 3 օրը մեկ անգամ հաշվարկով: 1. Ավտոմոբիլների լվացումը՝ հպումով, ոչ ավտոմատ եղանակով, սրահի մաքրում փոշեկուլի միջոցով, շարժիչի արտաքին մակերևույթի կեղտաբծերի մաքրում, թափքի չորացում և անհրաժեշտության դեպքում առաջացած խազերի վերացում հատուկ նյութերով: Լվացման ժամանակ օգտագործել միայն ավտոմոբիլների լվացման համար նախատեսված ոչ քայքայիչ լվացող նյութեր: 2. Աշխատանքի տևողությունը մեկ ավտոմոբիլի համար մինչև 20 րոպե: 3. Ավտոմոբիլների լվացումը կատարել Ճանապարհային ոստիկանության 2-րդ սպայական գումարտակի 1 – 6 վաշտերի կողմից տրված կտրոններով և արտահերթ: 4. Ավտոմոբիլների լվացումը սպասարկել ժ. 08.00 մինչև. 20.00 5. Ավտոլվացման համար նախատեսված տարածքը առնվազն 25 քառ.մ.:	դրամ	1 620 000	1	***Աշոցք Ամասիա***	Պայմանագիրը ուժի մտնելուց 10 օր հետո Բայց ոչ ուշ, քան 20.12.2022
5	50111180/30	*Ավտոմեքենաների լվացման ծառայություն* **/Արթիկ Մարալիկ/** Գնման առարկա է հանդիսանում Ճանապարհային ոստիկանության 2-րդ սպայական գումարտակին ամրակցված ճանապարհապարեկային ավտոմոբիլների /համապատասխան գունագրաֆիկ տառաթվային նշագրումով և կահավորված լուսաձայնային սարքերով/ լվացում, սեդան և ունիվերսալ թափքով ավտոմոբիլների համար, մեկ ավտոմոբիլի լվացումը 3 օրը մեկ անգամ հաշվարկով: 1. Ավտոմոբիլների լվացումը՝ հպումով, ոչ ավտոմատ եղանակով, սրահի մաքրում փոշեկուլի միջոցով, շարժիչի արտաքին մակերևույթի կեղտաբծերի մաքրում, թափքի չորացում և անհրաժեշտության դեպքում առաջացած խազերի վերացում հատուկ նյութերով: Լվացման ժամանակ օգտագործել միայն ավտոմոբիլների լվացման համար նախատեսված ոչ քայքայիչ լվացող նյութեր: 2. Աշխատանքի տևողությունը մեկ ավտոմոբիլի համար մինչև 20 րոպե: 3. Ավտոմոբիլների լվացումը կատարել Ճանապարհային ոստիկանության 2-րդ սպայական գումարտակի 1 – 6 վաշտերի կողմից տրված կտրոններով և արտահերթ: 4. Ավտոմոբիլների լվացումը սպասարկել ժ. 08.00 մինչև. 20.00 5. Ավտոլվացման համար նախատեսված տարածքը առնվազն 25 քառ.մ.:	դրամ	4 584 000	1	***Արթիկ Մարալիկ***	Պայմանագիրը ուժի մտնելուց 10 օր հետո Բայց ոչ ուշ, քան 20.12.2022

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ոստիկանություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011021947
ՀՎՀՀ 01533334
հեռ. 59-69-30
էլ. Փոստ; policetv.gnumner@mail.ru

Վ. Մովսիսյան
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ
«Հենդ Արտ» ՍՊԸ
Մալաթիա-Սեբաստիա
Հովնաթանի փ.20Ա
ՀՎՀՀ 01306884
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 2050022593931001
Հեռ:099333328
Էլ.հասցեն՝ hendartllc@mail.ru

Ա.Ռշտունյան
/ տնօրեն/
(ստորագրություն)
Կ.Տ

ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության մեքենաների

		սեդան	**ունիվերսալ**
Լոռու մարզ	*Ստեփանավան*	*3 մեքենա*	*6 մեքենա*
	Տաշիր	*2 մեքենա*	*4 մեքենա*
	Սպիտակ	*2 մեքենա*	*4 մեքենա*
Շիրակի մարզ	*Աշոցք Ամասիա*	*1 մեքենա*	*5 մեքենա*
	Արթիկ Մարալիկ	*3 մեքենա*	*14 մեքենա*

Գումարը՝ Սեդան թափք - 1 320(լվացման քանակ) x 1976(միավոր գին) =2 608 767 դրամ

Ամենագնաց թափք - 3 960(լվացման քանակ) x 2273(միավոր գին) = 9 001233 դրամ

Գ Ն Ո Ր Դ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ոստիկանություն	«Հենդ Արտ» ՍՊԸ
ք. Երևան, Նալբանդյան 130	Մալաթիա-Սեբաստիա
ՀՀ Ֆինանսների նախարարության	Հովնաթանի փ.20Ա
աշխատակազմի գործառնական	ՀՎՀՀ 01306884
վարչություն	«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 900011021947	Հ/Հ 2050022593931001
ՀՎՀՀ 01533334	Հեռ:099333328
հեռ. 59-69-30	Էլ.հասցեն՝ hendartllc@mail.ru
Էլ. Փոստ: policetv.gnumner@mail.ru	
Վ. Մովսիսյան	Ա.Ոշտունյան
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/	/տնօրեն/
(ստորագրություն)	(ստորագրություն)
	Կ.Տ

Հավելված N 2
«29» 04 2022թ. կնքված
ՀՀ Ո ՀՄԱԾՁԲ-ԱՎՏՈԼՎԱՑՈՒՄ/2022/Հ-42
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50111180/26	*Ավտոմեքենաների լվացման ծառայություն* ***/Ստեփանավան/***	-	-	-	950 400	950 400	950 400	1 425 600	1 425 600	1 425 600	2 376 000	2 376 000	2 376 000	2 376 000
2	50111180/27	*Ավտոմեքենաների լվացման ծառայություն* ***/Տաշիր/***	-	-	-	606 000	606 000	606 000	909 000	909 000	909 000	1 515 000	1 515 000	1 515 000	1 515 000
3	50111180/28	*Ավտոմեքենաների լվացման ծառայություն* ***/Սպիտակ/***	-	-	-	606 000	606 000	606 000	909 000	909 000	909 000	1 515 000	1 515 000	1 515 000	1 515 000

4	50111180/29	Ավտոմեքենաների լվացման ծառայություն /Աշոցք Ամասիա/	-	-	-	648 000	648 000	648 000	972 000	972 000	972 000	1 620 000	1 620 000	1 620 000	1 620 000
5	50111180/30	Ավտոմեքենաների լվացման ծառայություն /Արթիկ Մարալիկ/	-	-	-	1 833 600	1 833 600	1 833 600	2 750 400	2 750 400	2 750 400	4 584 000	4 584 000	4 584 000	4 584 000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ոստիկանություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
Աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011021947
ՀՎՀՀ 01533334
հեռ. 59-66-32
Էլ. Փոստ:policety.gnumner@mail.ru

Հ. Մովսիսյան
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/
(ստորագրություն) Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Հենդ Արտ» ՍՊԸ
Մալաթիա-Սեբաստիա
Հովնաթանի փ.20Ա
ՀՎՀՀ 01306884
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 2050022593931001
Հեռ:099333328
Էլ.հասցեն՝ hendartllc@mail.ru

Ա.Ոշտունյան
/տնօրեն/
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 3
« » 2022 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 2022 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն